Արցախի Համագումարին Որոշումը

Ստորեւ «ԼՂԻՄ-ի ազգաբնակչութեան լիազօր ներկայացուցիչների որոշումը» բաղկացած 8 կէտերէ, որ առնուած է 16 Օգոստոսի Համագումարին: Բնագիրը կը հրատարակենք ամբողջութեամբ:

Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութեան լիազօր ներկայացուցիչների համագումարը նշում է, որ խորհրդային Ֆեդերացիայի յետագայ զարգացման միջոցների յետեւողական իրացումը, տեղական խորհուրդների ընդլայնումը, իսկական ժողովրդապետութեան հաստատումը, հասարակական կեանքի դեմոկրատացումը կը նպաստեն Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական ու սոցիալական լուծմանը, ռեգիոնում կը վերացնեն ազգամիջեան լարուածութիւնը:

ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի 1989 թուականի Օգոստոսի 1ի

(Շար.ը տեսնել 14րդ էջ)

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

(Շար. առաջին էջէն)

որոշմամբ յանձնարարուած է ամէնուր՝ երկրամասերում ու մարզերում անցկացնել արտահերթ նստաշրջաններ, քննարկել ռեգիոնում իրավիճակը եւ հասարակաքաղաքական-մասսայական շարժումների հետ համատեղ որոնել ու մշակել գոյութիւն ունեցող դժուարութիւնները յաղթահարելու ուղիներն ու ձեւերը։

Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը զրկուած է այդ հնարաւորութիւններից, քանի որ անօրէն կերպով դադարեցուած է ժողդեպուտատների Մարզխորհուրդի եւ կուսակցութեան Մարզկոմի գործունէութիւնը։ Յատուկ կառավարման ձեւ մտցնելու մասին որոշումը անկենսունակ է գտնուել։ ԼՂԻՄի Յատուկ Կառավարման Կոմիտէն՝ իրաւական անորոշ կարգավիճակով, զրկուել է բնակչութեան վստահութիւնից եւ ի վիճակի չէ կառավարել Մարզը։ Իրավիճակը ԼՂԻՄում ծայրայեղօրէն բարդացել է, սակայն իշխանութեան կենտրոնական մարմինների կողմից այն արժանի գնահարականի եւ պատշաճ վերաբերմունքի չի արժանանում։ Ահա այս ամէնից ելնելով էլ, համագումարը, մինչեւ կառավարման որակապէս նոր, սահմանադրական ձեւի վերականգնումը, արձանագրում է ազգային խորհրդի՝ Մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտութիւնը։

Համագումարի պատգամաւորները ափսոսանք են յայտնում, որ ատրպէյճանական կողմը, հրաժարուելով համագումարին մասնակցելուց, չի օգտագործել փոխադարձ մերձեցման, երկխօսութեան, հասունացած հարցերը համատեղ, պառլամենտական ուղիներով լուծելու իրական հնարաւորութիւնը։ Այնու հանդերձ, համագումարը համոզուած է, որ ազգային Խորհրդի ստեղծումը թոյլ կտայ Մարզում կայունացնել իրավիճակը, վերականգնել աշխատանքային ռիթմը, բարիդրացիական յարաբերութիւններ հաստատէ ռեգիոնում ապրող բոլոր ազգութիւնների եւ ժողովուրդների ներկայացուցիչների միջեւ։ Ընդհանրացնելով տեղական խորհուրդների, կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպութիւնների անցած նստաշրջանների ու պլենումների, աշխատաւորական կոլեկտիւների եւ հասարակական կազմակերպութիւնների ժողովների նիւթերը, շարունակելով այն ամէնը վճռականօրէն „աղթահարելու ուղիները, ինչը սասանում է վերակառուցման հանդէպ մարդկանց հաւատը, Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչութեան լիազօր ներկայացուցիչների համագումարը, յենուելով ԽՍՀՄ սահմանադրութեան, համամիութենական 19րդ կուսկոնֆերանսի եւ ԽՍՀՄ ժողովրդական Դեպուտատների համագումարի՝ հասարակութեան յետագայ դեմոկրատացման եւ ժողովրդապետութեան սկզբունքն ամրապնդելու հիմնադրոյթների վրայ, որոշում է.

1. Ելնելով բնակչութեան կամքից, որ արտացոլուած է ժողովրդական դեպուտատների շրջանային ու քաղաքային խորհուրդների, կուսակցութեան շրջանային եւ քաղաքային կոմիտէների, արհմիութենական, կոմերիտական եւ հասարակական կազմակերպութիւնների շրջքաղկոմիտէների պենումների, աշխատաւորական կոլեկտիւների, ռեգիոնում սրութիւնը կայունացնելու գիւղական լիազօրների ժողովների որոշումներում, մինչեւ ժողովրդական դեպուտատների Մարզխորհրդի եւ կուսակցութեան Մարզկոմի գործունէութեան վերականգնումը, համագումարն ընտրում է Ազգային Խորհուրդ եւ ժողովրդի անունից համագումարների միջեւ ընկած ժամանակամիջոցում նրան Մարզի կառավարման բոլոր ոլորտներում տալիս է ղեկավար մարմնի դեր կատարելու լիազօրութիւններ։ Ազգային Խորհուրդը ժողովրդական ինքնակառավարման դեմոկրատական մարմին է՝ ծնուած վերակառուցմամբ ու ժողովրդական զանգուածների ստեղծագործութեամբ, կոչուած է «ԽՍՀՄում ամբողջ իշխանութիւնը պատկանում է ժողովրդին» քաղաքական հիմնակազմային սկզբունքը գործնականում յանգեցնէ իրական բովանդակութեան։

2.- Ազգային Խորհուրդը, ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար, իր կազմից ընտրում է նախագահութիւն։ Ազգային Խորհրդի եւ նրա նախագահութեան առաջնահերթ նպատակը իրավիճակի կայունացումն է, ազգամիջեան ընդհարումների կասեցումը, վերակառուցման ընթացքին ակտիւ աջակցումը, Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը։

Ազգային Խորհուրդն ու նրա նախագահութիւնը կոմունիստների եւ անկուսակցականների ժողովրդական միաձոյլ մարմինն են։ Ճանաչելով ԽՄԿԿ ծրագիրն ու կանոնադրութիւնը, եւ գործելով խորհրդային օրէնքների շրջանակներում, իր գիծը յանուն ժողովրդի շահերի անց է կացնում ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների, կուսակցական կոմիտէների, արհմիութեան, կոմերիտմիութեան, աշխատաւորական կոլեկտիւների խորհուրդների, հասարակական կազմակերպութիւնների միջոցով։ Ազգային Խորհրդի եւ նրա նախագահութեան ծառայական պարտականութիւններն ու իրաւասութիւնը որոշուած են ներկայ համագումարի կողմից հաստատուած կարգայնութեամբ։

3.- Համագումարը յայտարարում է ԼՂԻՄը հետեւողականօրէն հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետութեան հետ վերամիաւորելուն հասնելու իր վճռականութեան մասին։

4.- Համագումարը խստագոյն կերպով մերժում է Մարզի ներքին գործերին Ատրբէյճանի կառավարութեան կողմից միջամտութիւն ցոյց տալու իրաքանչիւր փորձ եւ Ինքնավար Մարզի հանդէպ անընդունելի է համարում թելադրանքի քաղաքականութիւնը։

5.- Համագումարի պատգամաւորները ողջունում են ժողովրդական դեպուտատների Շահումեանի (գիւղական) Շրջխորհրդի նստաշրջանի՝ Շրջանը ԼՂԻՄի հետ վերամիաւորելու մասին որոշումը եւ հաւաստում են այդ հարցի լուծմանը աջակցելու պատրաստակամութիւնը։ (Որոշումը կուտանք առանձին, քովի սիւնակով. Խ.)։

6.- Համագումարը Մարզի բնակչութեանը կոչ է անում դադարեցնել գործադուլները եւ ազգային Խորհրդին պարտաւորեցնում է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել Մարզի ամբողջ տարածքում աշխատանքային նորմալ ռիթմը վերականգնելու համար։

7.- Համագումարը յանձնարարում է Ազգային Խորհրդին՝ առաջադրուած խնդիրների իրականացման համար մշակել համապատասխան ծրագիր։

8.- Որպէս պետական իշխանութեան խորհրդանիշ, Մարզի տերիտորիայում ընդունել ԽՍՀՄ պետական դրօշը։